նորա տեսցես, թէպէտեւ մասամբք երեւեցաւ ծառն ի պտղոց իւրոց չարութեան, ըստ որում Տէրն մեր ա-ռաքեաց։ Եւ հոգենուագէ բան մարգարէին եւ միայն զայս ուսուցին հարքն մեր, եւ ոչ թելադրեալ զմեզ ի համալսարան իմաստից ճեմարան, կամ ի կրթմունս առաքելականաց եւ մարգարէականաց՝ զի նոքօք ըզ-բօսնուլ եւ արդ ի վկայութիւնս զբանս նոցուն յար-մարէի։ Այլ սոքօք եւ զայլոցն դու բերեալ համազու-գեսցես ի վերայ գոռոզին մահացելոյ, զի եւ բանք հոգելից սրբոցն ի միում ականց են բղխեալք։ Քանզի նա յիրաւի նստեալ զեղբօրէ չար խօսէր եւ ի վերայ որդւոյ մօր իւրում դնէր զգայթակղութիւն, եւ ժա-մանակին ցուցեալ զիւր բարեկամութիւն արտաքուստ՝ եւ ի ներքուստ լի էր անիրաւութեամբ ըստ առակի Տեառն՝ բռեալ գերեզմանաց. քանզի եօթն չարիք ծը-բարեալ էին ի սիրտ նորա եւ դարանակալէր աղքա-տաց եւ տնանկաց եւ պարզամտաց՝ ձգել յորոգայթ իւր եւ խոնարհեցուցանել ընդ լծով ձեռին իւրոյ, որ-պէս եւ քեզդ արար։ Եւս առաւել քոյդ օրինակաւ տիրել ի վերայ տնանկաց, տառապեցուցանել յորսանս իւր յամբարտաւանին եւ յանգոսնելն իւրում։ Որդւոց մարդկան, ասէ, ատամունք իւրեանց զէնք են եւ լե-զուք նոցա որպէս սուր սուսերի որոգայթ պատրաս-տեալ ոտից մարդկան. խոնարհ արար ի ներքոյ ոտից իւրոց եւ անկաւ ինքն ի նոյն գուբն զոր փորեալ պե-ղէր ի վաղուց։ Մարտնչէր ընդ այլս ի տարապարտուց, հատուցանէր չար փոխանակ բարւոյ, ատելութիւն փո-խանակ սիրոյ. որոյ բերանն խօսէր զնանրութիւն եւ աջ նորա աջ էր մեղաց։ Զի՞ պարծէր ի չարութիւն հզօրն յանօրէնութեան, զօրհանապազ խորհեցաւ ըզ-նանրութիւն ի լեզուի իւրում. որպէս ածելի սուր սրեաց զնենգութիւն, սիրեաց զչարութիւն քան զբա-րութիւն, զնանրութիւն քան զխօսս արդարութեան։